




ծնում է, ժպտում, ծիծաղում, երգում
 մի քիչ հուզական,
 հետո ու նվկում, իր սիրած դիրքում
 հորիզոնական

սիրում է, շոյում, տրվում բացարձակ
 ասում է՝ հուսա
 ...նա միշտ կենդանի, մազերը արձակ
 անունը սուսա...

վահրամ սահակյանի
 թուղթերի մասին



վահրամ սահակյան

թուղթերի մասին

բանաստեղծություններ

Վահրամ Սահակյան

ՎՆՈՒՆԴ ԱՌԲԱՎ
բանասեղծություններ

Երեւան 2015

Հեղինակային հրատարակություն

Գր. 412D8/96665

Սահակյան Վ. Բանաստեղծություններ 102 էջ

**Ժողովածուն պարունակում է Վահրամ Սահակյանի
2014 թվականին գրված բանաստեղծությունները,
ինչպես նաև մի քանի չափածո գործ, հանված
հեղինակի վերջին վեպից:**

Չեղինակային հրատարակություն, 2015© V. S.

ISBN 977-3611-50-147-z18

www.vahramsahakian.com

ԷԳՂԵՍ ԱԶՆԻՎ Է

Առանց բնի ու տանիքի,
կապրենք հազիվ մենք,
թող միշտ մի բան չհերիքի՝
էդպես ազնիվ է...

Անկախ ժամի, ու տարիքի,
սերը կասի հեզ՝
-Տրվիր դու ջերմ այս ալիքին,
թող նա տանի քեզ:

Ու երբ հասնես այն բարիքին,
որ երազել էս.
կզգաս հանկարծ՝ այս տարիքում
վաղուց անզեն էս...

ԱՊՐԵԼ ԱՆՈԱՐԹ

Ապրել մի կյանք, մի ակնթարթ
քի՞չ է, միթե,
ու չլինել գազան ու մարդ,
լինել թիթեռ...

չռայլել առանձնապես՝
խոստում, երդում
ու չկանգնել շատերի պես՝
կյանքի հերթում...

կրել հոգում մի բուռ շնորհք
մի փոքրիկ գանձ,
հղկել նրան, սարքել ողորկ
ու տալ մարդկանց...

տալ ու տրվել, ու վճարել՝
մեռնել թեկուզ
հետո հարբել ինչպես Չարենց
մինչև էգուց...

սիրուն ապրել արագ, սահուն,
խաղաղ ու հեզ,
սիրել սերը, չապրել ահում
հարուստի պես...

սիրել մի կին ու դառնալ կես
շոյել գոնե,
օդն ու ջուրը զննել ինչպես
Կլոդ Մոնե:

ապրել որպես հնչող տավիղ
օդում, ջրում,
տերյանական մթնշաղի
անուրջներում:

ԱՌԱՆՑ ԲԱՌԵՐԻ

Մեռնում է տարին.
ծառեր եւ թե օդ
գծում են հեռվում
կիսամեռ կայծեր...
աշնան նկարին,
անոսկոր, անհող
ամպերն են գամվում,
որ որք են ու ծեր...

Եւ հանգչեն պիտի
պարուրվեն ձյան տակ
արմատից կառչեն
մոլոր ծառերի...
ձմեռն էլ գիտի
ձյունով բովանդակ
գրկել ու պահել
առանց բառերի...

...քնում է տարին
մենք էլ ենք մտել
աշունը կյանքի
դեղնում ենք, մեռնում...
կյանքի նկարին
եղյամ է պատել
ծածկել ապակին
թողել մեզ հեռվում...

...բայց տարին այրված
կննջի ցրտին,
երկար ձմեռում,
ձյուններում փրկող...
հետո մի հարված
եւ խելառ մարտին
կարթնանա եռուն
արեւի ներքո...

...մի՞թե մեզ համար
կան նոր գարուններ
նոր աշուն խելոք
իմաստուն ու վեհ...
բայց ո՞վ է համառ
սիրով պարուրել
ձգում է թելով
ու ասում է՝ ել...

...նրանի՞ց կառչեմ
ու դառնամ հրթիռ,
աշնանն այս ծանծաղ
դեղնատանջ գույնի...
Նա ունի աչեր
եւ ունի սրտիկ
ունի նա ծիծաղ
ու սեր նա ունի...

...փաթաթվեմ գրկին
փաթաթվեմ թելով՝
պտտվող հովի,
ու խաբեմ տարուն...
որ ծնվեմ կրկին
աշնան պես խելոք,
ամռան պես մոլի
ու նոր, ոնց գարուն...

...ելնեմ արահետ
ձյուները դիտեմ,
դիմեմ այս ահել
կանգուն ծառերին...
ննջեմ սիրո հետ
քանի որ գիտեմ
գրկել ու պահել
առանց բառերի...

ԱՆՈՒՆԳ ՄՈՒՍԱ

Նա այրող, սիրող, երբեմն կոպիտ
մարմնիդ կփարվի
սրտիդ կոփպչի, կթակի հոգիդ
ու կգալարվի:

Ուրախ, կենդանի, մազերը արձակ
տողեր է շարում,
երբեմն լռում, դառնում է արձան,
երբեմն՝ մարում:

Ճեմում է, ժպտում, ծիծաղում, երգում
մի քիչ հուզական,
հեռում ու նվվում, իր սիրած դիրքում՝
հորիզոնական:

Ու սրտիդ միջից կհանի նոր սիրտ՝
եթե կարկամես,
չկա՞, աղքատ ես, դատարկ ես ու բիրտ,
թե կա՛ արքա ես:

...Սիրում ես, շոյում, տրվում բացարձակ,
ասում ես՝ հուսա
...դու միշտ կենդանի, մազերդ արձակ՝
անունդ մուսա...

ԱՆԿԱՐՈՂՆԵՐԸ

Պայքարողները
(անկարողները),
կոպտում, ոռնում են, աղաղակում,
Գետնին պառկած են
(գլխա ու քաժ են)
պատվիրված ներվ են մեր քաղաքում:

Պայքարածներն ու
(վարկ առածները),
մարդկանց տանջում են բողոք-երթում,
իրոք կռվածը
(կյանքը կրվածը)
պանթեոնում է, կամ էլ բերթում:

Անապահովը
(չգիտես ովը)
սիրված հերոս է ու կարեկցված,
հրճվում է գեղը
(աղքատ, սգեղը)
կարեկցողին էլ՝ շարտում ցած:

Իսկ անտաղանդը
(ձիրքից հիվանդը)
երգում, խաղում է, գրում է գիրք,
իսկ ժողովուրդը
թափած իր բուրդը
նրան տալիս է հարգանք ու դիրք:

Ցանցում ապրողը
(վիրտուալ գողը)
խեղճին սիրում է, օգնում, like-ում,
բայց կյանք քանոզը
(էդ Like անողը)
իր շուրջն ատում է ռեալ կյանքում:

Թող ազգի թրիքը
խաղա ինտրիգը
ցանի իր թույնը որպես նվեր...
...ցանում-ցանում են
ու կործանում են
էս փոքրիկ հողը՝ դարեր ի վեր...

ԱՆՑՈՐԳ

Փողոց, որ անձայր է
եւ օդն արդեն սառը
արելը անուժ է,
քայլերն էլ դանդաղ...
Խամրած է ծիծաղը
հնչյուն է սեր բառը
իսկ խիճն էլ մի հուշ է
սառած ու անթաղ:

Անցորդ դու մրսել ես
դու բիրտ ես... դու՝ ցածր
ծախում ես հույսերը
զնում ես պատրանք...
Ու կին, որ անսեր ես
դու կին սիրտը կարծր
տենչում ես այդ սերը՝
տալիս ես ապտակ...

Տենչում ես, կառչում ես
արյունդ սառել է
հոգիդ խուլ ու փակ է,
անկիրթ ես, դաժան...
...թերեւս վերջում էլ
լսես այս բառերը՝
Ապրելը... դա թանկ է
քո կյանքն է էժան...

ՏՂԵՐՔԸ ԿԵՐՏՈՂ

վերջերս հեռացած տղերքին

Տղերքը կերտող
գնում են հերթով,
գնում են, եւ թող՝
չմնա դատարկ
հողը իր բերքով,
մարդը իր երգով,
չմնա պարտված՝
ամբոխի ներքո,
կամ բռնադատված՝
անազնիվ երկով...
Ե՞րբ բեմի, գրչի,
ամենափրկչի
դուռը կթակվի,
այդ ամեն ինչի
լույսը հեռացած,
ներս կպարփակվի...

...տղերքի կերտող
մուսան իր երգով՝
բերման կենթարկվի...
ու հողն իր խորքով
դեռ չի դատարկվի,
...կեղծիքը երկրի
էլ չի շահարկվի...

...ձեր հոգին, տղերք
արյուն էր ու վերք,
...մենք կտանք նոր բերք
ձեր տեղը, տղերք:

ՏԱՌԵՐ, ՏԱՌԵՐ

փակվիր, փակվիր դու երեկո...
ոնց բացվել ես՝ փակվիր ջագով
ու նվագիր բասը քո հին
փակվիր այսօր բացված երգով,
փակվիր ու թող օրը անգոր,
հանգիստ ձուլվի երեկոյին
որ եռում է, ալեկոծվում
պարզում մթում կորած շողին,
լուսավորում ոտքդ ծալած,
համբույրներով օրը օծում
բացում համայն մի անկողին
ուր շուրթերիդ ներկը հալած
փոխում է իմ գույնը հոգու
տանում դնում սիրո ծոցում...
ու սրտեր է հանում, պոկում
ու կորցնում կեսգիշերում...

...կեսգիշերում, որ փեշերում
օրորում է սիրտս հոգնած
իսկ դու ջահել, իսկ դու առույգ
տանում ես ինձ կարմիր հագած
տանում հանդարտ, տանում կտրուկ
մեծ աշխարհի փոքրիկ արկած
առնանձնակի, ուրախ, հատուկ
հմայություն համատարած...
որ գալիս ես օրվա վերջին
ու կորում ես մի շաբաթով
ու ճախրում ես ինչպես թռչուն,
նստում կրծքիս, ասում՝ շոյիր
համբույրներով օրը շրջում,
օրը շրջում, երեկոյին
ասում՝ փակվիր դու երեկո
փակվիր, դարձիր ժամեր, հուշեր
թող որ մնանք մենք երեքով
մի ես, մի դու ու մի գիշեր

...ու չկորես մի շաբաթով...
քանզի եկել, դարձել ես կես
հայտնվել ես մագաղաթով
եկել ես որ օրը թեքես՝
գրես հատ-հատ, գրես կես-կես
տառեր, տառեր՝ սիրում եմ քեզ:

ԱՂՏՈՏ ՀՈԳԻ

Գռեհիկ հոգին,
խավից ստորագույն
հայացքը թոկին
ատում է թաքուն՝
մարդկանց մտածող
սիրում է նա լաց
զույգերի թախծող...
Եւ նրա աղտոտ
հոգու ընդերքում՝
զագրանքը համայն
մտել է խոր քուն...

*...դու, հողե արձան
ուղեղի կարիճ
տականք ողբացյալ
կարեկցող դահիճ...*

...նա չի սիրում զգալ
սիրում է սգալ...

սիրում է նա խիստ
անապահովին,
հիվանդ, աղքատին
քրչոտ անփողին...
հղում է համբույր,
լիզել է ուզում
հսկա աշխարհի
մեռելներին բյուր...
հուզում է, հուզվում

...բայց եթե հանկարծ
մի կարիքավոր
իր դուռը ծեծի,
ուզի հացի փող,-
-Ոչ, կասի, կեցիր...
կխփի ափով

փոքրի թե մեծի,
կանիծի այնժամ
աշխարհին բոլոր
ուժերին համայն
ու կելնի հարթակ
...նա շատ է դատարկ
...նա շատ է էժան...
կուտի մեզ, կուտի
անկուշտ է, դաժան...

սիրում է իր պես
անձիրք, ինքնագործ
ձեռքը վերքերին
եւ իրենք իրենց
պոետ անվանող
գրիչով խարտոց...
ծուռ գագրանքներին...

...նրանք, որոնք որ
տառեր են ցփնում...
եւ կեղտոտ գրչի
վայրի գույներով
եւ ինչպես աղետ՝
դնում են, ծեփում
մերկ աղջիկների
մոմերի հանգող
նկար խայտաբղետ,
...թափառող էգեր,
տանջվում են, եփվում,
...աստվածաշնչի
ձեռքեր աղոթող,
մայրամուտի տակ
լպստվող զույգեր
վշտերից պայթող...

...ես իր թույներով
նա էլ է շաղում
բանաստեղծություն...
խոսքերը աղում
բառերը փրթում
տողեր է կթում
թույն, թույն, թույն ու թույն...

...ու գռեհիկը
այդ քստմնելին
առնում է գիրկը
մի անտանելի
մորմոքների պարկ...
սիրում է ոռնալ
ախ իմ ազգ, իմ ազգ,
իմ ազգ դու մորթված
քեզ լաց կտրվի
քեզ ձոն, ողբ ու ասք,
արցունքս թող տամ

մենակ կոտորվիր
քո վրա կողբամ...
...ես ողբացյալ եմ
քայլող անցյալ եմ,
մեռել եմ, դիակ
քո սյունն եմ միակ...

*դու, հողե արձան
ուղեղի կարիճ
տականք ողբացյալ
կարեկցող դահիճ...
ոռնոցի հանճար...
համբույրդ՝ հոգոց
աթոռը՝ խաչքար,
տոնդ՝ մեռելոց...
ու լույսդ մի մոմ
գավակդ՝ քո չափ
դոյակը քո գոմ
աղջիկդ վիշապ...*

*շորերն էլ միշտ մուգ
կերածը լեղի
գլխում էլ միշտ սուգ
տեղում ուղեղի...*

Իսկ նա խոսում է,
ասում է եկա
լեզվով լաբժուն՝
համակիր ինձ կա՞
տալիս եմ երդում
իմ արատավոր
աղտոտ կրքերով,
ջնջում եմ, սրբում
ճիվաղ ձեռքերով
ուժը մտավոր...

սիրում եմ ես լաց
զույգերի թախծող...

*...իսկ վաղուց լլկված
մտածողները՝
մտել են մի ծով
ու քնել խորքում...
խոր քուն է,
խոր քուն:*

ՀԱՆԳԻՍԱՏԵՍԻՑ՝ ՎԱՐԳԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

-Ո՞վ է նա, այս անվերջ անհանգիստը...
դերասան չի, այլ հողմ: Խենթ է նա:
Բայց հայտնվում էր մեր մեջ այդ արտիստը,
որ ցավից մեր՝ հանկարծ չխենթանանք:

Նա բացում էր սրտի վարագույրը,
ու սփռում ծիծաղի գանձարան,
դառնալով ամենքի սիրած հյուրը՝
իր հոգին դարձնելով կացարան:

Եւ հանկարծ՝ մի բախում, կյանքը խիստ է,
չներեց ընթացքին եւ թափին...
ու խփվեց ու ցնցվեց այդ արտիստը,
փորձության հարվածվեց իր ճամփին:

Եւ նորից մի թատրոն: Թեեւ նիստ է,
ուր կեղծիքը հեռու չէ ճշտից...
...չի խաղում այս անգամ մեր արտիստը,
երերում ու հետում է վշտից:

Անսահման դրդաց օղը, հողը,
...մեղադրում, պաշտպանում են համայն,
...ոչ նրանք են, ոչ դու տուժող կողմը
տուժողները դա մե՛նք ենք միայն:

Ցանկանում ենք փակվի վարագույրը
չենք ուզում քեզ տեսնել այդ դերում,
թող մի քիչ հանդարտվի մեր հին հյուրը,
մենք նրան կսպասենք պարտերում:

Նա բախվեց: Ու բախվում է նա միշտ էլ,
ու հայտնվեց խորքերում անձավի...
...մեր արտիստը պարպեց ամբողջ վիշտը
որ ապրենք մենք առանց մի ցավի:

ՆՈՐ ՀԻՆ ՕՐԵՐ

Օրերը միշտ նույնն են ու նույնը
անգույն են, դժգույն են, մոլոր,
մահինն է, ահինն է այդ գույնը
ու հին են օրերը այդ նոր...

Երբեմն պայծառ են, թեկուզեւ,
տրվենք մեր անմիտ հույսերին
տանում են թե սերն ու թե հույզը...
իսկ ցավը սփռում ուսերին

Օրերը եւ հին են ու սին են
անկամ են, անմիտ են ու խեղճ
գալիս են, գնում են, միասին էլ
կորում են վաղվա օրվա մեջ:

ԻՆՉՊԵՍ ՎՏԱՐԱՆԳԻ

Տարածքը այս դատարկ է
վշտերը անհատակ են
ապրելը հերյուրանք է՝
կռիվ, բողոք ու երթ...

թախիժն արդեն կատակ է
ժպիտը երկուտակ է,
գավաթը մեր անտակ է
շնչելն էլ՝ մերթ ընդ մերթ:

Թեև մինչ 90-ը՝
անհոգ էր կյանքն, ասում են,
հիմա ասեք՝ էս ո՞ւմն է՝
երկիրն այս գորշ ու ցուրտ...

անհայտ է, թե ես ուր եմ
հողիս վրա ես հյուր եմ,
չկա ժպիտ ներսում էլ՝
սառած են դեմք ու շուրթ:

Երկինքը կարկատված է
հպումն արդեն հարված է
խոսքերը երկտված են
ոգու ցրտից անդին...

մեռնելը լոկ վարկած է
ապրելն արդեն արկած է
հոգին հեռվում բանտված է
ինչպես վտարանդի:

ԱՆՑԱՎ, ԱՆՑԱՎ,

Տարին անցավ ինչպես առու...
չանցավ ցավով, անցավ անցավ,
չար, մթագին այս անտառում՝
մենք ունեցանք փոքրիկ բացատ...

*...բացատ, որում սեր արթնացավ,
որին տարին, շոյեց, անցավ...*

տարին բերեց սառը օրեր
հետո գարուն ու սեր անծայր
ու որոշեց գնալ-կորել
քանզի սիրուն չդիմացավ...

*...չդիմացավ, եկավ, անցավ
սիրեց նա մեզ, մեղմ ու անցավ...*

չհոգնեցրեց տարին երբեք
խաղաց հողմի, քամու դերը
պատուհանս սարքեց երկփեղկ
ուր փակվեցինք ես ու սերը...

*...սերը թեթել, փոքրիկ սերը
որը մերն էր, միայն մերը...*

ճախրեց ոգի, եռաց արյուն,
եթերներում ապրող դարձա...
ո՞րն էր ուժը այս լուռ տարու
այքան նոտա, երգեր, արձակ...

*խոսքեր երգով, շնչով, արձակ
սա էր տարին, որը անցավ...*

ՏՈՎԵՐՆ ԱՅՍ ԹԵԹԵՎ

Նոգնել եմ, պառկել...
խոսքերը անուժ
չեն ապրում, շնչում
հարցեր են անթիվ՝
...եւ ո՞ւմ ուղարկեմ
հույսի մի նմուշ
կանչի մի հնչուն
ու սիրո փաթիլ...

ձանձրույթ է պատել
հոգում, սենյակում,
լուսամուտների
բակում, գուցե...
...գիշերն էլ հատվել
տողի արանքում
ինչպես մտերիմ
բացվել է, ցրվել...

տառերն էլ հանդարտ
իրար են գգվել,
իրար են լսում,
այրվում են, եռում...
...մտքերն անավարտ
կրակից պրկվել՝
ճախրում են անգուսպ
ինչպես եթերում...

...ու եթե ծնվեն
տառեր վարանոտ,
հնչուն ու շուկ,
մտքերի բանակ՝
...գուցե հենվեն
բառերին անհող
տողերին անշուք
ու ծորան անհագ...

...ն՞վ կարդա պիտի
եւ ո՞ւմ եմ ուղղել
տառերից քամված
հնչունն այս երգի...
...միտք առանց սրտի՞
սիրտ առանց ուղե՞ղ
մարմիննե՞ր գամված,
թե՞ մի լույս ոգի...

...կամ մարդիկ, ոնց որդ
շատ ճկուն թեպետ
որ գիտեն տանել
բայց խեղճ են, անուժ...
...եւ ամեն երրորդ
բացարձակ տգետ,
երկրորդը ամեն՝
ավարտված ապուշ...

...սրանք ոգի չեն
փոշի են անքաշ
որոնցում հարցեր
-Ինչո՞ւ եք շնչում
թառել են, կառչել՝
պոետներ անտաշ
պարողներ անձեռք
գրողներ սրջուն...

...փաթիլն իմ երգի
ո՞ւմ համար կիջնի
երբ օղը հստակ
ծանր է, թունավոր...
...կգտնի՞ մեկին,
որն օրվա վերջին
դեռ պարզ է ու ջինջ
բարի, գունավոր...

...իսկ սիրտ կա, եթե
որ սեր է պոկում
ցողերից այս թաց
ու սարքում փաթիլ՝
...տողերն այս թեթեւ
կթառեն հոգուն
ինչպէս ժամանած
մի սիրո կաթիլ:

ՄՈՏԱԳՈՐԸ

պոետ Վահան Վարդանյանին

Էստեղ Վահանն է,
էնտեղ Վահանը...
բառ ու հնչյունի
այդ հոգեհանը...
Նա, որ վերջ չուներ
բայց դարձավ վերջին
մարդ-մոհիկանը...
Ահա Վահանը
բյուր կեղծիքների
այդ հոգեհանը...

Քոնը այսօրն է
երեկ չէր քոնը
երկիրն անգոր է
կորել է տոնը

ասես բացվել է
ցավերի հորը...
ու հնացվել է
ամեն մի նորը...

Մտնենք նոր օրը
շրջենք էջերը...
Վահանի շնորհը,
որ չի ջնջվել դեռ...
երկինքն ու ծովն են
քո հանգրվանը
էդպես մահվանը
սանձեց Վահանը...
...Ջնջեց վատ օրը,
սփռեց անդորրը
հոգու հատորը
այդ մոտադորը:

ՀՆՉՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՐ ՓԱՐՎՈՂ

Ամպը կապույտով կարոտ կկապի,
ապրիր կարկամած նրա կետերում...
գերիր դու, փերի, փարվիր իմ ափին,
ժպտա անհեթեթ, թեպետ եթերում:

Թեթև ու անթեթեթեթը միթե՛
հույզի եզրերին կսուրան իզուր,
ու կշնջան շնչարգել շուրթեր,
երազներ ձրի կտանեն քեզ, ո՞ր:

Քեզ ո՞ր կտանեն ճամփեքն այս վերջին,
հասիր քո սիրով, լսիր, ի՞նչ ասեմ...
շրջվիր ու ջերմիր, մի տանջիր, իջիր,
սահիր ու նայիր... ու տես ինչ է սեր:

ՏԱՐԻՆ

հիվանդ աշունը մեռավ
հետո հերթն է ձմեռվա
բայց արյունդ թող եռա
ամառվա

արդեն բասը այս ջագի
հեւեւում է խուլ, հագիվ
հիմա սիրտը քո ազնիվ
թող հուզի

դրսում, այնտեղ, մշուշում
ո՞վ է քայլում ու խշում
ով է անվերջ սեր հուշում
ու հիշում

աչքեր, աչքեր ոնց ուլունք
շուրթեր բարակ, շունչ ու ունք
մազեր գանգուր, փայփլուն
ու հլու...

տարին տվեց ու առավ
տարին արդեն մի պառավ
դու ջերմություն մի համառ
դու ամառ:

ԳՈՒ ԱՄԱՌ

ձանձրալի է արդեն
մարդիկ գորշ ու անդեմ,
ու բաշխված են դերերը բոլոր,
իսկ դու միշտ սիրաբաղձ
օդերում թափառած
դու ամառ, դու ժպիտ ամեն օր...

Ինձ ասում ես՝ եկա
սեր հանձնիր եթե կա,
ու սեղմիր քո մարմինը մարմնիս,
եկ այդպես էլ մնանք
ալեկոծ ու անհագ
ու չկա էլ տարի ու ամիս...

Դու թեթեւ ես, սիրուն,
որ սիրում ես, սիրում
չես տանջում դու անգամ ինքդ քեզ,
թե ընկնեմ ես մի պահ
կթռչես իմ վրա
ու վստահ եմ, որ վեր կձգես...

Իսկ հրեշտակը մահվան
սարսափով անսահման
այցելի կացարանդ, եթե՝
ընդունիր դու նրան
համբուրիր անվարան
ու ժպտա, դու ապրել ես թեթեւ:

ԿԵՂՍԻՔՈՒՄ

Վարդան Պետրոսյանին

Ճամփեքին քամիներ ու հողմեր...
Առջեւում փորձանքի մի տեսիլ
...իսկ հետո մեղադրող բյուր կողմեր...
տուժածներ՝ ամբարիշտ, ագրեսիվ...

Տուժող կողմ... նրա շահ պաշտպանող...
իսկ ի՞նչ շահ կա հիմա ամենում՝
ձեր մեղքերը ջնջել Վարդանով՝
այ թե ինչ էք միայն կամենում...

Մեղադրո՞ւմ էք: Ասեք, թե ինչու
իսկ դո՞ւք ով էք եւ ի՞նչ, ինչատե՞ր...
վերեւում Նրա երգն է հնչում՝
դուք կծում էք ինչպես միջատներ:

...Միջատներ, միջակներ, ինչքան կան,
թե ատող, թե սիրող, «սատարող»
նետվեցին ու հասան մինչ էկրան,
ոռնացին, ծվվացին այս տարով:


Ներոսներ շատացան *դեմ* խոսող,
գռեհիկ լացկաններ ողբացյալ,
ու լուրերը գետի պես հոսող
խեղդեցին թե ներկա, թե անցյալ...

Գրեցին՝ Պետրոսյան ենք բոլորս
մենք հերոս ենք, արի ենք, հասնող...
ոռնացին, գոռացին մինչեւ օրս...
անիմաստ, անօգուտ, վնասող...

Դա դրսում: Իսկ ներսի «Մեղադրողը»՝
կեղծիքներ է թափում անընդմեջ...
...ո՞վ էք դուք... ու սրա բեմադրողը...
ասացեք՝ ո՞վ է մարդը ձեր մեջ:

Տուժողներ, հուշողներ, որ «արդար» էք
որ հիմա կծելով էք տարված.
Թե Նրան պատահել է վթարը՝
դուք ծնվել էք արդեն վթարված:

Լավ, տուժել էք արդեն, թե՞ դա քիչ է,
էլ ումի՞ց էք հիմա հանում ոխը,
ձեր ուզածը արդեն, ասեք ի՞նչ է
եթե ոչ միայն **փողը ու փողը...**

Նա շնչում է, հնչում է, հավետ,
դուք շնչում էք, ասեք, թե ինչու,
թքվեցիք կեղտ-մորից ո՞նց առնես՝
կսատկեք հետույքում  ո՞նց ճիճու...

Նա ուղիղ է, դուք ծուռ էք, թերի,
Նա ապրում է միայն տարերքում...
դուք ճղճիմ էք, ճորտեր էք, գերի...
դուք ոռնում էք միայն, Նա երգում:

Այո, Նա... Նա ապրում սրտով,
այո, դուք... գոյություն էք ձգում...
ստի մեջ, ստի տակ եւ ստով...
...կեղծիքից, կեղծիքով, կեղծիքում:

ԵՐԿՈՒՍՈՎ, ՄԻԱՍԻՐՏ

զույգ ձեռքերդ դե տուր
ու ոտքերդ փետուր
շրթունքներդ, մազերը հանձնիր...
 Եւ շուկդ՝ երդում
 որ հոգի է թերթում՝
 օվկիանում աչքերի քո անծիր...

Քո ժպիտը՝ անվերջ
իսկ ծիծաղը քո երջ-
անկության մի հուժկու փոթորիկ...
 պահպանիր ինձ քո մեջ
 դողդողա անըդմեջ
 իմ շնչով, իմ գրչով կոտորվիր...

երբ գիշերն է իջնում
չեմ հարցնում, թե ինչու
վերանում եմ քեզ հետ միասին
 երկուսով ենք թռչում
 նույն շնչով, նույն շնչում
միաձայն, միաշունչ, միասիրտ:

ԳՐՍՈՒՄ ԵՎ ՆԵՐՍՈՒՄ

դրսում դեմքեր ինչպես արձան,
աղքատ, անփող,
ու անհատներ, վաղուց դարձած՝
ամբոխ, ամբոխ

ամբոխ, միայն բողոք բառը
արած անգիր,
խոսքը կծու, բառը դառը՝
անկիրթ, անկիրթ

տարիներով այդ ամբոխին
ասին՝ ելեք,
ելավ, այրվեց, դարձավ մոխիր՝
երեկ, երեկ

...իսկ դու, այստեղ, ինձ մոտ, ներսում,
երազ մի բուռ,
ինձ հետ խոսում, իմ հետ կիսում՝
համբույր, համբույր

անցան օրեր, անցավ տարին,
ձմեռ, ամառ
հիմա կաս դու, միմիայն իմ
համար, համար

մարմինդ տաք, աշխույժ, կայտառ,
գրկեմ նորից,
սրտի՞ց, հոգո՞ւց կուզես պատահ՝
որի՞ց, որի՞ց

ջրում թռչում, օդում լողում,
ինչպես արեւ,
սիրո համար էլ չես թողնում՝
բառեր, բառեր

խոսքեր ասեմ, բառեր կամ վանկ,
խոսքեր, խոսքեր,
շուկ խոսքեր, անբիծ ու թանկե
ուկե, ուկե

իսկ ձեռքերս մարմնիդ համար,
ինչպես սյուներ,
որ չդիպչես գետնին համայն
ձյունե, ձյունե

ու բոստաններն եմ այս հրկեզ
հաշվում, հաշվում,
քանզի գարուն ես, իսկ ես՝
աշուն, աշուն:

ՄԻ ԲՈՒՌ ՍԵՐ

ճամփաներ ես կիսել
կիսավեր, քարքարոտ
ու բերել մի բուռ սեր
մի բուռ սեր ու կարոտ

ու որքան ժամանակ
դու գալիս ես, գնում
քեզ ըմպում եմ անհագ
թե հիմա, թե հնում

դեռ չեկած, չպառկած
դողացնում ես, հեռում
գալարվում ես երկար
եւ ժամեր են տեւում

արարում ես կրքեր
նվաղում ես, եռում
թե վերեւ, թե ներքեւ
թե մոտիկ, թե հեռու

տարածքներ ես անօդ
շրջանցել ու հասել
հեռացրել ես կարոտ
ու բերել մի բուռ սեր:

ՓԱԿԻՐ ԳՌԵՐԸ ԱՅՍ

Դրսում մարդիկ նվազ
չարչի, կոպիտ, տականք.
փակիւր դռները այս
ես չեմ սիրում մարդկանց:

դռները այս փակիւր
դանդաղ հանվիւր հիմա
այնպէս արա հագիդ՝
մի թել էլ էլ չմնա...

...իսկ դու... հոնքեր, շրթունք
իսկ դու ձեռքեր համայն...
մարդիկ անվերջ տրտում
մարդիկ հավերժ անբան:

փողոցներում միշտ քեն,
ատելության ճիրան,
ներսում՝ տաքուկ կրծքեր
եւ մի բարակ իրան:

մարդիկ սրտները քար
դարձած միայն մի սեռ
դրսում միայն պայքար
ներսում միայն մի սեր

սիրիք հիմա, դու կաս,
ու մի չքվիր հանկարծ...
փակիր դռները այս
եւ չեմ սիրում մարկանց:

ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐ 80- ԱԿԱՆՆԵՐԻ

Մարդիկ ցրվեցին, երկիրը քամվեց,
կանայք մնացին միայն իմ ներսում,
էն որ ութսունին եղել են 16,
20, 25, 27, անգամ 30...

Դուք տարբեր էիք, բայց ոչ անտարբեր,
սրտակից նրան, ով մարդ էր արժան,
տղերքից մեկն էլ վատանար, հարբեր՝
չէիք հեռանա կողքից երկու ժամ:

Դուք չէիք նայում ապրանքի գնին
սիրո վայելքն էր ձեր պիրկ երակում,
դասերից հետո՝ երկու շիշ գինի...
ու երկու համբույր՝ Սարյան պուրակում:

Մի բան չէր ռադիոն, մի բան չէր TV-ին
ձայնապնակ էր ու թանկ կասետներ
Բենսոն ու Ներքի, Ալ Ջերրո, Սթիվի,
պտտվում էին... Գուցե ասեմ՝ է՞հ...

Չկար կազինո, iPhone եւ Gucci,
կար հավատ ու սեր ու կար առողջ սեքս,
ն՞վ էր հարցնում՝ կույս է, թե կույս չի...
գեղցիները դեռ չէին լցվել ներս...

Գուցե ուրիշ էր թատերականը,
գուցե ՋՈՎԵՏ-ում կային եւ կույսեր,
բայց ձիգ էր ստորին խավի փականը,
ու ռաբիզները դեռ չէին բուսնել:

Ամեն ինչ տակից ճարեիք թեկուզ,
շրջագգեստ մինի թե գլխարկ փետրե,
այսօրվա կինը, իր ջինսով ռետուզ՝
ձեր հագուկապին կանվանի ռետրո...

Դուք բարի էիք, կյանքն էր մի քիչ խիստ,
բայց անկախության մակաբույծները՝
էնքան ոռնացին՝ կգբ, չեկիստ,
որ նոր սերունդը խեղվեց գուցե:

Նասուն լինելու ճամփեն երկար է
սերունդը կարծես ընկել է գերի,
եւ հին օրերի քսան տարեկանը՝
երեսունհինգն է մեր այս օրերի:

Լավ հիշողության պոռթկումը թե կա՝
ստիպում է կրկին ձեր դեմքին նայել...
իմ սիրուհիներ, քույրեր երեկվա,
մայրեր այսօրվա... ու տատեր նաեւ:

ԻՆՉԵՐ, ԻՆՉԵՐ, ԻՆՉԵՐ

Առավոտը միայն ահ է.
կգա՞ս այսօր թե չէ...
կգաս... ինչե՞ր կպատահեն
ինչեր, ինչեր, ինչե՛ր

կփաթաթվես, կասեմ մնա
դա սերն է մեր առջեւ...
ովքե՞ր միայն կհասկանան՝
քչեր, քչեր, քչեր...

դու մարդ կոչված այս դեերից
թողել ես ու փախչել
մնում է քեզ իմ թեերից
կառչել, կառչել, կառչել

սրտիցս դուրս, տես, այն կողմում
մրսել ես ու թրջվել
կարող ենք մենք իմ անկողնում
շրջել, շրջել, շրջել

սրտիդ տրվում, մարմնիդ տիրում
չկա արդեն ուժ էլ
վաղն էլ կգաս, ես չեմ սիրում
հուշեր, հուշեր, հուշեր:

ՍԵՐԸ ԿՏԱՎԻ ՎՐԱ

Դեզերում էիր ամպերում օտար,
հանկարծ փայլեցիր երկնքի շողին
Երբ հանդիպեցինք՝ գույներդ գտար,
երբ համբուրվեցինք՝ ձուլվեցիր տողին...

Բեմին հնչեցրի ձայնդ նուրբ ու թավ,
վրձնահարեցի՝ կքվեցիր հովից,
նվագեցի քեզ որպես մի ջութակ,
ապրեցրի ջագով որպես իմպրովիզ:

Չայնիդ հետ մտա ասես ունիսոն,
հավեցինք, դարձանք դու՝ ես ու ես՝ դու,
ջերմացանք պահի հպանցիկ հույսով,
Մնացի քո մեջ, իսկ դու արվեստում:

Այդպես կմնաս, իրական, միստիկ,
կդառնաս հյուլե՝ թեթեւ, երերուն,
շոյվեցիր սահուն ձեռքով արտիստի,
մի գիշեր ինձ մոտ, հետո՝ դարերում:

Դեզերում էիր ամպերում օտար,
վրձինն իմ հանկարծ հոգին քո գտավ,
հնչեցիր թեթեւ, ինչպես մի նոտա,
ապրեցիր բեմին, մնացիր կտավ:

ՇԱՏ ՄՈՏԻԿ, ԷՐՈՏԻԿ

Երկար ոտներ, պիրկ ու նիհար...
մազեր դրախտի գույնի
փշրող հայացք սրտիս ի հար
ահա ինչեր նա ունի

ու պարանոց բարակ, բարակ
այտեր ցցված ու փափուկ
սահուն քայլեր՝ արագ արագ...
կրծքեր, կրծքեր, միշտ տաքուկ

ու շրթունքներ՝ անհագ, անհագ
քնարաձե նրբին կոնք
կլոր աչքեր՝ կրակ, կրակ
երկու կամուրջ՝ երկու հոնք:

Շունչը հեռվից, կամաց, կամաց
ահա արդեն շատ մոտիկ
դունչը առաջ, շրթները բաց...
ծիծաղն անգամ էրոտիկ

ձայն, որ միայն, նվագ, նվագ
հեռոց ինչպես փոթորիկ
ու բղավոց վերջում անհագ
եթե իրեն կոտորի...

հիացմունքի վառ գույնն է նա
թե սիրուն է, էրոտիկ՝
սրտում հաստատ նա կունենա
թե միտք, թե խելք, թե հոգի:

ՍԵՐԵՐԸ

Սերերը բերում են, բերում են,
բերում ու թողնում են նոր հույս,
քանի որ սերեր են՝ հեռու են,
անխոնջ են, անձայն են ու սուս

սերերը տիրում ու գերում են,
սերերը եւ ամպ են, եւ շող,
սերեր կան՝ կյանքի ձեռքբերում են,
ոմանք էլ դաժան ու ճնշող

սերերը հորդում են, անվերջ են,
ոտքեր են, շուրթեր են, ուսեր,
բացում են մեզնում իրենց էջը
բացում ու գրում են *նոր սեր*:

ԳՈՒ ՈՒ ԵՍ

Խոսում, խոսում ես, խոսում
ու շոյում ես խոսքերով,
խոսքերից սերն է հոսում
ու տանում իր հոսքերով...

Աչքեր, հոգի եւ մարմին՝
քեզ են լսում անընդհատ,
մնա սրտիս ու փարվիր,
-Կանգ առ,- ասեմ,- ակնթարթ:

Փարվիր կրծքիս ու տարվիր
իմ խոսքերով ու կրքով,
սի՞րել է պետք՝ դա կարվի,
չէ՞ որ դու ես իմ ներքո:

Իմ հեզնանքից դու ժպտա,
դառը խոսքից՝ ծիծաղիր
միայն հիմա ինձ գթա՝
տրվիր ու... մի հապաղիր:

Տոգիս քանդում ես, շարում
քո մատներով հուր ու հեզ
էս է... ամբողջ աշխարհում
մնացել ենք դու ու ես:

ԵԹԵ ԻՆՁ ՓՐԿԵԼ ԵՍ

Մարել են կրքերը
որտե՞ղ են երգերը,
երազը դարձել է ավազ...
ու նա, որ երեկ դեռ
բարի մի ընկեր էր՝
այսօր միայն դեմք է, ավաղ:

Բայց մեկ է, տիեզերքը
փակել է իմ վերքը,
հանձնել է հիմա ինձ մեկին,
ահա դռան շեմքը
ահա նրա դեմքը,
ու դեմքն այդ կոչվում է *մի կին*:

Կարծես թե թռչուն է,
շնչում, ներշնչում է
վառում ու վառվում է հանկարծ,
բայց մեկ էլ հանգչում է,
տակիցս փախչում է
ու գալն իր դարձում է արկած:

Եւ օրը փակվում է
կրկին ինձ հակվում է
կոտրում եմ մարմինը նիհար
Այդպես էլ պառկում ենք
իրար ենթարկվում ենք,
«Միրում եմ»՝ ասում ենք իրար:

Ապրում են կրքերը
այստեղ են երգերը՝
համբույր են նրանք քո դեմքին,
*ու թե ինձ փրկել ես՝
թե երգ, թե ընկեր ես
թե սեր ես, թե տեր ես, թե կին:*

ԿԻՆ ԵՎ «ԿԻՆ»

Նա՛ Կին գեղեցիկ,
ճախրում է օդում
մի եկեղեցի,
ուր չես աղոթում
ու չես վառում մոմ,
նա լուռ է տրվում
ու չի պահում ծոմ
երբեք չի քերվում
անմիտ թախիծով...
Չի պահում հույսեր
ասում դատարկ տեքստ
ցանկանում է սեր
ու անում է սեքս...
Ապրում է նա կյանք...
բացվում ոնց խեցի
եւ ունի ճախրանք
սիրուն, գեղեցիկ:

Սիրունը գնաց...
ահա տգեղ կին
անընդհատ քնած՝
աշխարհի փեղկին
թեեւ ծնվել է
լավ արտաքինով
սակայն սնվել է
ոխով, ու քենով...
ու աշխատում է
վազվզում է միշտ
կյանքը հատում է
սարքում հսկա վիշտ...
Ապրում է անձայն
ապրում ոնց գերի
մի մեծ սարդոստայն
կապած կրծքերին...

Դառնում 30
մնում է դատարկ՝
ուսում ու ուսում՝
հետն էլ աշխատանք...
Եւ քառասունում
չդարձած տատիկ
աֆորիզմներ է
շարում իր պատին...
Իսկ կյանքը գնաց...
մնաց՝ տգեղ կին
անընդհատ քնած՝
աշխարհի փեղկին...

ԱՐԵՎԱՇԵՐ ԱՂՋՆԱԿ

Արեւահեր աղջնակ
ելած միջից խեցու
օդով գալիս հաճախ
ամպերին ես հեծնում

ոտքերը քո փետուր
ժպիտը քո եթեր
մարմինը քո դե տուր
մերթ գալարվիր, մերթ՝ ել

քո վարսերով անհաս
արեւ ես դու: Սա մեկ,
քանի՞ տարի դու կաս՝
հազիվ թե մի՝ քսանմեկ...

Արեւածին աղջնակ
ելած միջից խեցու...
կենդանության հանճար
մեղեդիով լեցուն...

համբույրը տուր՝ կզգամ
օդում, ջրում, երգում...
...քանի՞ տարի ես կամ
հազիվ էլ քսաներկու...

ԿՈՆՍԻԵՐՎԸ, ԶՈԿՈՆԳԱՆ ՈՒ ԵՍ

Քունս կարծես նոր տանում է,
դարձնում քՆահաճ,
այս Փարիզը արթնանում է
միշտ ինձնից առաջ...

Չեմ ելնում, ինչքան ջանում եմ,
թողնեմ հետոյի՞...
առավոտն էլ վերջանում է
քարտս մետրոյի:

Դեպարտյուն ապահովված է,
Ազնավուրն էլ Շառլ,
Ջոկոնդան Լուվրում գրանցված է
էդ ես եմ քլոշար:

Իսկ երեկ, կոնսիերժն ասում է
attention Monsieur
Դուք հարբած եք, ու ներսում է
մադամ փոլիսյեն:

Մի բան լավ է, տաս բան թարս է
Ջահել եմ, մոլի...
Բայց թե լավն է Մոնպարնասը
Ու հին Ռիվոլին:

Իսկ կանայք մի ամբողջ դեզ են
ու շատ անորոշ
սաղիս վերջը Պեր Լաշեզն է՝
a' droite, թե a' gauche...

Մարի Լուիզ, Կատրին, Շանտայը...
գնացեք, ձեր մերը...
Դուք էլ ձեր Շատլե Լե Նալը
Ու ձեր Սեն Ժերմենը:

ՏԵՐԵՎԻ ՊԵՍ

Տերեւի պէս խշշում ու քշվում եմ,
չարություն, բարություն հավաքում
մենությունն ինձ անձայն ներքաշում է
վերացնում խորտակվող նավակում:

Բայց հիմա առավոտ չէ, կեսօր է,
ու սիրո ոտնաձայնն է հնչում,
մենությունն ու թախիժը անգոր են
եթե դու ես հոգումս ննջում:

Շոգ է, ցուրտ է, անձրեւ է թե ձյուն է
քամիները քեզնով են լցվել
ինչ սիրուն է այս լուռ մենությունը
որ կիսում ես երբեմն ինձ հետ:

Դու կիսում ես ու ես մտածում եմ
կեսօրով իմ հոգով անցավ, ո՞վ
գուցե նա հուշերի առկայծո՞ւմ է,
որ խոսում է հիմա քո ձայնով...

-Քո մարմինը հիմա,- կասի,- Իմն է,
կգրկի, կսիրի ու կայրի,
կսողա, կդողա անկողնում նա
կսեղմի ոտքերով իր վայրի:

Տերեւի պէս խշշում ու քշվում եմ
ու լողում երազի առվակով,
փոքրանում, մերկանում եմ աշնան հետ,
խորտակվում հուշերի նավակով:

ԳՐՔԻ ՇՈՒՆՉԸ

Աննշմար տառերից զորացած
գիրքը շունչ էր տալիս եթերին
ամեն բառը դառնում էր արկած
իսկ էջերը անվերջ փոթորիկ...

Ինչ-որ մեկը անհույս թե հույսով
երազներ էր հյուսել տառերից
որը մեղմ էր ու նուրբ ինչպես հով
ու խիզախ էր ամուր ժայռերից...

Ու չկա ինչ-որ մեկն այդ հիմա
տիեզերքի եզերքին է քայլում...
բայց տառերը նրա աննշմար
օվկիաններ ու ժայռեր են այրում:

ԿՏԱՆԵՍ

Քո մարմինը լինում է կես-կես...
մազերիդ հայտնի բույրն եմ շնչում,
երբ սկսվում է, հարցնում եմ՝ ինչպես
վերջանում է, հարցնում եմ՝ ինչո՞ւ:

Տիրակալ է հոգիդ իմ հոգուն,
իսկ մարմինդ՝ անխոս ենթակա
ինձ սիրում ես, շոյում ես, հոգում
գուցե՛ս մի ժամում չորս անգամ:

Կփախչենք իրարից, դու կամ ես,
մեր սիրուց կմնա մի աճյուն,
կտանես ամեն ինչ, կքամես
չգիտեմ՝ ե՞րբ, ինչպես եւ ինչու...

ՀԱՆԿԱՐԾ

Դանդաղ է անցնում ժամանակը
իսկ սերը արագ, սրընթաց,
սպասում, երագում ես ողջ կյանքը,
կորցնում ու գտնում ես հանկարծ:

Միրո հետ էլ ողջ կյանքդ կիսում ես,
մոլեգնում ու ելնում ես հունից,
ու մեկ էլ ահա ես հիսունն ես՝
փախչում ես արդեն վաթսունից:

Ժամերը անցնում են, բայց հոգ չէ՝
թե սիրտ կա կողքիդ դեգերող,
բռնե՞լ ես, պահիր նրա պոչը,
շնչիր նրա բույրը գերող:

Ուլքե՞ր են դժբախտ այդ «տերերը»,
որ ծնվել ու սատկել են անդարձ
հաշվիր, որ հանկարծ էլ մեռել են
եթե վաճառվել են հանկարծ:

Կարիքը, տարիքը, չարիքը՝
անգոր են անգամ երեքով,
թե սերդ կրքոտ ու լավիկն է,
թե սեքս է գիշեր-ցերեկով:

Դանդաղ է անցնում ժամանակը,
ժամերը կորում են անդարձ,
ու լավ է՝ սիրում ես այս կյանքը,
ու լավ է՝ մեռնում ես հանկարծ:

ԵՐԱՋԸ ՄԻ ՏԵՂ

Ձմեռները դանդաղ, բայց անցնում են,
եւ գարունն է մտնում իմ եզրով,
օդը լուռ, ջերմապաղ ու անձյուն է,
ու երկիրը պատված է քեզնով:

Մեղեդի է ասես քո հնչունը,
որ իմ մեջ ու քո մեջ է շնչում,
մազերիցդ գանգուր ես կառչում եմ
ու մարմինն եմ քո ջերմ նվաճում:

Վայելում եմ անգին լռությունդ,
արբենում եմ շնչով ու բույրով
եւ քաղաքը, փողոցն ու իմ տունը՝
դողդողում է քո մի համբույրով:

Ես ու դու ենք այստեղ ու չորս պատը
ո՞ւմ համար քեզ հիմա մերկացրի...
դեռ շոյում եմ կրքից սառած այտդ
ու մազերդ թափված, ցաքուցրիվ:

Կձուլվեմ իմ ու քո մենության հետ,
կխորհեմ՝ կկորչե՞ս դու միթե...
ու երկար կհնչի շուկ-ձայնդ...
կթռչի այս երազը մի տեղ...

ԺԱՄԵՐԸ ԵՎ ՆԱ

Նրան կանչում ու ասում՝
մնա ու կենա...
անկողին, տարի կիսում
թե ես, ու թե նա...

հեռացող ակընթարթներ
դատարկ ու հիմար
նա կոտրել է ու հարթել
հիմա ու հիմա...

նյարդեր, տագնապ, վիշտ ու վախ
արել ենք կես-կես
դարը տրտում, Նա ուրախ
թե նա ու թե ես...

կպահեմ մարմնիս ներքո
ու չեմ չարչարի
թող ապրի հոգուս երգով
չդիպչի չարին...

ու տարի, որը ծնել է
ձմեռ մի ունայն
մնացել ենք, ես, ձմեռը
ժամերը ու Նա...

ՕՐԵՐ, ՕՐԵՐ ԿՀՈՒՍԵՆ

Առավոտվա, նոր արթնացող
ճառագները ձիգ, լուսե,
քո ճամփեքին կտան մի ցող
քո գալուստը կհյուսեն...

Քո ոտքերով այդքան երկայն
քո կրծքերով այնքան պիրկ
իսկ խոսքերը, որոնք թե կան
երկու հատ են՝ սեր ու կիրք...

...Ու կան կանայք, հավերժ անսեր
փակված, մենակ ու թշվառ
դու քո կրքով նրանց կասես,
որ զոհվել են վաղաժամ...

Ու սպասում են՝ ուր որ է, ուր՝
կգա ասպետը հաստատ,
իսկ մարմինը մաշվում է լուռ
հոգուն պատում սարդոստայն...

Իսկ դու թեթեւ, իսկ դու ուրախ
իմ սենյակում ես, որում
մի անկողին, սիրո պուրակ
մի քանի ժամ օրորում...

Ու դեպի ինձ անվերջ թռչող
ես մի մարմին կտենչամ
լինես եկող, լինես փախչող
լինես բարի, լինես չար...

...արեւներին անդրադարձող
շուրթեր, կրծքեր եւ ուսեր...
իմ անկողնուն կտան մի ցող
օրեր, օրեր կհյուսեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էրդեսս ԱՁՆԻՎ Է.....	3
ԱՊՐԵԼ ԱՆԹԱՐԹ.....	4
ԱՌԱՆՑ ԲԱՌԵՐԻ.....	6
ԱՆՈՒՆԴ ՄՈՒՍԱ.....	10
ԱՆԿԱՐՈՂՆԵՐԸ.....	12
ԱՆՑՈՐԴ.....	15
ՏՂԵՐԶԸ ԿԵՐՏՈՂ.....	17
ՏԱՌԵՐ, ՏԱՌԵՐ	19
ԱՂՏՈՏ ՅՈԳԻ	22
ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻՑ՝	
ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ.....	30
ՆՈՐ ՀԻՆ ՕՐԵՐ	33
ԻՆՉՊԵՍ ՎՏԱՐԱՆԴԻ.....	34
ԱՆՑԱՎ ԱՆՑԱՎ	36
ՏՈՂԵՐՆ ԱՅՍ ԹԵԹԵՎ.....	38
ՄՈՏԱԴՈՐԸ.....	43
ՀՆՉՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՐ ՓԱՐՎՈՂ	45
ՏԱՐԻՆ.....	46
ԴՈՒ ԱՄԱՌ.....	48
ԿԵՂԾԻՔՈՒՄ	50

ԵՐԿՈՒՄՈՎ ՄԻԱՍԻՐՏ	54
ԴՐՍՈՒՄ ԵՎ ՆԵՐՍՈՒՄ	56
ՄԻ ԲՈՒՌ ՍԵՐ -	59
ՓԱԿԻՐ ԴՈՆԵՐԸ ԱՅՍ	61
ԸՆԿԵՐՈՒՅԻՆԵՐ 80-ԱՎԱՆՆԵՐԻ	63
ԻՆՉԵՐ, ԻՆՉԵՐ, ԻՆՉԵՐ -	66
ՍԵՐԸ ԿՏԱՎԻ ՎՐԱ -	68
ՇԱՏ ՄՈՏԻԿ, ԷՐՈՏԻԿ	70
ՍԵՐԵՐԸ	72
ԴՈՒ ՈՒ ԵՍ -	73
ԵԹԵ ԻՆՁ ՓՐԿԵԼ ԵՍ-	75
ԿԻՆ ԵՎ ԿԻՆ -	78
ԱՐԵՎԱՅԵՐ ԱՂՋՆԱՎ --	81
ԿՈՆՍԻԵՐԺԸ, ԶՈԿՈՆԴԱՆ ՈՒ ԵՍ -	83
ՏԵՐԵՎԻ ՊԵՍ -	86
ԳՐԶԻ ՇՈՒՆՉԸ	88
ԿՏԱՆԵՍ -	89
ՀԱՆԿԱՐԾ	90
ԵՐԱՉԸ ՄԻ ՏԵՂ	92
ԺԱՄԵՐԸ ԵՎ ՆԱ	94
ՕՐԵՐ, ՕՐԵՐ ԿՅՅՈՒՄԵՆ.....	96

**Գիրքը գրեց, խմբագրեց, ձեւավորեց,
էջադրեց եւ հրատարակեց
ՎԱՀՐԱՄ ՍԱՀՐԱԿՅԱՆԸ**

**Լուսանկարը
ՆԻԿՈՂՈՍ ԳՈՒՅՈՒՄՁՅԱՆԻ
(25, 01, 2015թ)**

**Գրքի շապիկը
ԷՐՈՒԱՐԴ ՅԱԿՈԲՅԱՆԻ
(SHARM holding)**

© 2015

Բ

**ոլոր իրավունքները պաշտպանված են
Vahram Sahakian**

**Ձեր տպավորությունները կարող եք հայտնել
poesy@vahramsahakian.com
Էլ. փոստով
Տեղեկությունների համար այցելեք
www.vahramsahakian.com**

